

«ՀԱՍՏԱՏՎԱԾ»

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

խորհրդի «14» հունվարի 2021թ.

թիվ 02/03Լ-Հ որոշմամբ

Խորհրդի նախագահ

Գրիգոր Հովհաննիսյան \_\_\_\_\_



**ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուժի մեջ է' 2021թ-ի հունվարի «14»-ից

|                                                                                   |                                  |                                                                                  |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|
|  | Շահութաբաժնային քաղաքականություն | Կոդ: ՔԱՂ15 - 03<br>Խմբագրություն: 01<br>Դաս: ՀՊ<br>Ամսաթիվ: «14» հունվարի 2021թ. |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|

## **ԲԱԺԻՆ Ի. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

### **ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ**

1. Շահութաբաժնային քաղաքականությամբ սահմանվում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման սկզբունքները, նպատակները, սահմանաչափերը, դեպքերը և կարգը:
2. Շահութաբաժնային քաղաքականության նպատակն է՝
  - 1) շահութաբաժինների վճարման և չափի որոշման դեպքում ապահովել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և իր բաժնետերերի համար ընդունելի եկամուտների մակարդակ,
  - 2) շահութաբաժնային այն մակարդակի ձևավորումը, որը թույլ կտա ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին ընդլայնել իր գործունեությունը՝ ապահովելով մրցունակությունը,
  - 3) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ընթացիկ ներդրումային գրավչության բարձրացումը և կապիտալի շարունակական աճի ապահովումը,
  - 4) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված համապատասխան ցուցանիշների ապահովումը:

### **ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

3. Շահութաբաժնային քաղաքականության պահանջները տարածվում են շահութաբաժինների վճարման հետ կապված գործառույթներում ներգրավված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ աշխատողների վրա:

### **ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

4. Շահութաբաժնային քաղաքականությունն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
  - 1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենք:
  - 2) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենք:
  - 3) ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրը»:

|                                                                                   |                                  |                                                                                  |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|
|  | Շահութաբաժնային քաղաքականություն | Կոդ: ՔԱՂ15 - 03<br>Խմբագրություն: 01<br>Դաս: ՀՊ<br>Ամսաթիվ: «14» հունվարի 2021թ. |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|

- 4) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի N04/01 որոշմամբ հաստատված «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Կանոնադրություն» (փոփոխություններով):
- 5) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի մայիսի 22-ի թիվ 18/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն»:
- 6) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության 2017 թվականի հունիսի 10-ի թիվ 299/02Լ որոշմամբ հաստատված «Շահութաբաժինների վճարման ընթացակարգ»:
- 7) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման կարգ»:
- 8) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 27/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման կարգ»:
- 9) ԻՍՕ/ԻԷԿ 27001 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտ:

#### ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Շահութաբաժնային քաղաքականությունում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
  - 1) **Բանկ**՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
  - 2) **Քաղաքականություն**՝ Շահութաբաժնային քաղաքականություն:
  - 3) **Ժողով**՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով:
  - 4) **Խորհուրդ**՝ Բանկի խորհուրդ:
  - 5) **Վարչություն**՝ Բանկի վարչություն:
  - 6) **Տնօրեն**՝ Բանկի Գործադիր տնօրեն:

#### ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

6. Խմբագրություն 01, փոփոխություն է կատարվել Քաղաքականության անվանման մեջ՝ «*շահաբաժնային*» բառը փոխարինվել է «*շահութաբաժնային*» բառով և համապատասխան փոփոխություններ են կատարվել Քաղաքականության ամբողջ տեքստում:

|                                                                                   |                                  |                                                                                  |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|
|  | Շահութաբաժնային քաղաքականություն | Կոդ: ՔԱՂ15 - 03<br>Խմբագրություն: 01<br>Դաս: ՀՊ<br>Ամսաթիվ: «14» հունվարի 2021թ. |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|

## ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7. Քաղաքականությունը հավելվածներ չունի:

## ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԳԼՈՒԽ 1. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

8. Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշումը Խորհրդի առաջարկությամբ ընդունում է Ժողովը: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունում է Խորհուրդը:
9. Տարեկան շահութաբաժինների վճարման չափը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալի 20 տոկոսը, հաշվի առնելով Քաղաքականության 17-րդ կետով սահմանված սահմանափակումները:
10. Վարչությունը ներկայացնում է Խորհրդին հիմնավորումներ, հաշվարկներ և առաջարկություններ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
11. Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:
12. Տարեկան շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմում է Խորհուրդը:
13. Տարեկան շահութաբաժնի վճարման ցուցակում ընդգրկվում են Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
14. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ շահութաբաժինները կարող են կուտակվել և վճարվել մեկ տարվա ընթացքում:

### ԳԼՈՒԽ 2. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

15. Շահութաբաժինները վճարվում են համաձայն Վարչության 2017 թվականի հունիսի 10-ի թիվ 299/02Լ որոշմամբ հաստատված «Շահութաբաժինների վճարման ընթացակարգ»-ի, եթե այլ բան նախատեսված չէ շահութաբաժիններ վճարելու մասին Ժողովի որոշմամբ:
16. Բանկի բաժնետերերը բանկային հաշվին մուտքագրված շահութաբաժնի գումարը կարող է տնօրինել կանխիկ կամ անկանխիկ: Շահութաբաժնի գումարի կանխիկացման և այդ բանկային հաշվի բացման ու սպասարկման համար վճար Բանկը չի սահմանում:

### ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

17. Բանկի բաժնետերերին տարեկան շահութաբաժինների վճարումն արգելվում է, եթե՝
- 1) Բանկը բաժնետիրոջ պահանջով և ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, այն դեպքում երբ.
    - ա. որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,
    - բ. Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել,
  - 2) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

|                                                                                   |                                  |                                                                                  |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|
|  | Շահութաբաժնային քաղաքականություն | Կոդ: ՔԱՂ15 - 03<br>Խմբագրություն: 01<br>Դաս: ՀՊ<br>Ամսաթիվ: «14» հունվարի 2021թ. |
|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------------------------------------------------|

- 3) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:
- 4) լրիվ չի վճարվել Բանկի կանոնադրական կապիտալը,
- 5) շահութաբաժին վճարելու դեպքում կխախտվի ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական գործունեության որևէ նորմատիվ:

### **ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### **ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

18. Քաղաքականությամբ սահմանված գործընթացների մեջ ներգրավված Բանկի աշխատողներն անհատական պատասխանատվություն են կրում Բանկի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով՝ Քաղաքականությամբ նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

#### **ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

19. Քաղաքականությունում ամրագրված դրույթները Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից չպետք է ընկալվեն որպես շահութաբաժինների վճարման երաշխավորում:
20. Քաղաքականությամբ սահմանված դրույթների կատարման ընդհանուր հսկողությունն իրականացնում է Վարչությունը, իսկ վերահսկողությունը՝ Բանկի Ներքին աուդիտի վարչությունը:

**ք.Երևան**

**Կոդ: ՈՐԽ0102 -09/01Լ**

**Դաս: ՆՔ**

**«03» մայիսի 2023թ.**

## **ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ  
02/03Լ-Հ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժնային քաղաքականությունը կանոնակարգելու նպատակով՝ Բանկի Խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Բանկի Խորհրդի 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 02/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Շահութաբաժնային քաղաքականության» 9-րդ կետը փոփոխել՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.  
«9. Շահութաբաժինների վճարման չափը չի կարող գերազանցել Բանկի նախորդ տարեվերջի դրությամբ կուտակված շահույթի 20 տոկոսը՝ հաշվի առնելով Քաղաքականության 17-րդ կետով սահմանված սահմանափակումները:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Խորհրդի նախագահ՝**

**Գրիգոր Հովհաննիսյան**